Ա. Նարդյան

Սկ ձեռ ցոխան

Տարդ




A II/35640
907/112




Կար ցրված ու մոռացել
մի մարդ Նեղլիկ փողոցից։

2-3171ə



Առավոտը դեռ կանուխ
նա զարթնելով անկողնում՝
մահճակալին եր նստել,
շապիկ հագնելն սկսել



Ձեռը կոխեց թևքերը.
վա՛հ, չմեռնի քո տերը,
հագնելը շատ դժվար ե,
դու մի ասի — շալվար ե.

Инв. №20664

Ի՞նչ ցրված ե, մտացիր
մարդը Նեղլիկ փողոցի.



Վերարկուն փորձեց թե չէ,
ասին նրան՝ չէ՛, էդ չէ։



Գուլպաներ քաշեց վրաքին,
ախր քոնը չի, ասին։

Ի՞նչ ցրված է, մտացիր
մարդը Նեղլիկ փողոցի։



Գլխարկի տեղ՝ ահագին
Թավա դրեց իր գլխին։



Յեվ փոխարեն կոշիկի,
Ձեռնոց քաշեց կրունկին։

Ինչ ցրված է, մտացիր
մարդը Նեղլիկ փողոցի։



Մեկ էլ տրամվայով
նա կայարան շտապեց
և դռները բանալով՝
վագոնավարին ասեց.

Մեծանորդս սիրելի,
այ վագոնանորդելի,
իմ վագոնասիրելի,
մեծանորդավարելի։
Ի՞նչ էլ լինի — յես ճամբորդ,
ստիպված եմ ցած իջնել,
չի լինի տրամվայի մոտ
կայարանը կանգնեցնել։





Վագոնավարը զարմացավ,
ու տրամվայը կանգ առավ։

Ի՞նչ ցրված է, մասյեր
մարդը Նեղլիկ փողոցի։



Նա գնաց դեպի բուֆետ
ու կանգնեց տոմսակի հերթ։




Իսկ հետո վազեց կասսը՝
տանի 22ով կվասը։

Ինչ ցրված է, մատյլը
մարդը նեղլիկ փողոցի։



Կառամատույց սլացավ,
չկցված վագոն մտավ,
իր ճամպրուկը քարշ տալով,
բռնած են մեծ կապոցից,
ծանր հոգոց հանելով՝
դարսեց տակը բազմոցի։



— Սա ի՞նչ կիսակայան է.
կանչեց նա առավոտյան։
Իսկ մեկը նրան ասավ.
— Երևան քաղաքն է սա։



Փոքր ինչ քնեց նա նորից,
ու նայեց պատուհանից,
տեսավ կայարա՛ն մի մեծ
և զարմացած հարցրեց։



— Սա արդյոք ո՞ր կանգառն է,
Նալբանդը, թե՞ Փամբակը։
Իսկ մեկը նրան ասավ.
— Յերևան քաղաքն է սա։



Փոքր ինչ քնեց նա նորից
ու նայեց պատուհանից,
տեսավ կայարան մի մեծ
և զարմացած հարցրեց։



— Ի՞նչ կայան ե․ յերանի,
Ալագյազը կամ Անին։
Իսկ մեկը նրան ասավ․
— Յերեվան քաղաքն ե սա։




Ցավ նա զգաց, — ես ինչ է,
հինգ որ գնալս քիչ է,
վոր յետ չեկա ես կրկին
Յերևանը իմ նախկին...

Այ քեզ ցրված, մոռացիր
մի մարդ նեղլիկ փողոցից...

A II 35640




Փոխադրեց Ա. Ղուբրանյ
Սրբագրեց Գար. Հակոբյ

ԳԻՆԸ՝ 70 ԿՈՊ.

Арм
2-317

ՊԱՏ. ԽՄԲԱԳԻՐ՝ Հ. ԱՐԱՄ
ԼԻՏՈԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՍԵՐՈԲԻ

С. Маршак

**ВОТ КАКОЙ РАССЕЯННЫЙ**

ГИЗ ССР Армении Эривань

ՊԱՏ. 9203 ՏԻՐԱԺ 4000, ԳԼԱՎԼԻՏ 8334 (բ)
ՀՐԱՏ. 2470 ՊԵՏՀՐԱՏԻ ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ

Л.Б. в Ленгр.
А 193 г.
Ак. № 13
(5)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220035640

A II / 35640